զուղղափառն. սակայն հիանալի գործն այս է, զի պատրիարգն կոչեալ է զբազմութիւն եպիսկոպոսաց, իշխանաց և քահանայից, և յայտ ամենեցուն արտաքոյ ամենայն ակնկալութեան, կոչեալ առ ինքն զգրիգոր վարդապետն վէքիլ երուսաղէմի, տուեալ է զգաւազան և զմատանին զիւր, և արկեալ գնովաւ փիլոն չքեղ, լուիլու ամենեցուն ասացեալ է. կեցցէ գրիգոր վարդապետն պատրիարգ կոստանդնուպօլսու, ընդ որ յապուշ հարեալ ամենեցուն, չգիտելով զայլ ինչ առնել, սկսեալ են և նոքա գնոյն ասել, և իսկոյն տարեալ են առ վէգիրն. և սա ազդեալ թագաւորին, պատմեալ է զամենայն. և թագաւորն հաստատեալ է գնա գլուխ հայոց ազգին. իսկ նալօղլուն հրաժարեալ ի պատրիարգութենէն գնացեալ բնակեալ է ի իւսկիւտարու վանքն։ Բայց զմեր սէրգիս վարդապետն ոչ են թողեալ դատարկ, զի վասն լինելոյ նորա երիտասարդ, կացուցեալ են նմա զսարգիս վարդապետն իբրև գաստիարակ, և զվէքիլութիւնն Երուսաղէմի տուեալ են նմա, որ է մեծ լօխմայ։ Իսկ գրիգոր վարդապետին որակութիւնն այս է. զի է կէնճ, սամաթիացի, ծանօթ ուղղափառաց և ուղղափառութեան. հանդարտ բարուք և սիրօղ խաղաղութեան։ Իսկ թէ պատրիարգն ընդէ՞ր արար զայս, յայտնի է, զի երկու են պատճառք, մի զկնի մահուան իւրոյ մի ծնցի աղմուկ և կործանումն ազգին. և երկրորդ, զի մի գուցէ լինիցի պատրիարգ ոք յիւրոց ատելեաց, կամելով վրէժ խնդրել ի նոցանէ ի կենդանութեան և ի մահուան. յաւելեալ լինի և այս, զի լինելով ինքն փառասէր, կամեցաւ առնել զայս, զի զարմացուսցէ զամենայն վասն իւրոյ քաջութեան, ոչինչ լինելով ինքեան յայլուստ ինչս, գիտելով զի ինքն ոչ էր ապրանաց...։

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ Անանեանց

1764 յուլիս 7
[Հռոմ]

ՄԽԸ.

Իբր եզրակացութիւն հետագայ նամակին՝ կ՚անդրադարձնենք, թէ Ս. Ղազարու Միաբանութեան համար շատ հին է՝ ի Հռոմ Ուխտիս վանատեղի մ՚ունենալու ծրագիրը։ Ինչ որ նոյն առեն անգործադրելի մնացած է՝ իրականանալ սկսան կամաց կամաց ժամանակի ընթացքին։

Գերյարգելի

Տեղին գիտեալ ի մէնջ ի ստանալ ի Հռոմ, է ի մօնթէ գաւալլօն ի մին յեօթանց բլրոցն հռոմէականաց, ուր վասն գերազանցութեան տեղւոյն և օդոյն, պապն և այլք ոմանք ի մեծամեծաց ունին զկայանս։ Տեղին մեր հայի ի հեռուստ առ պալատն պապական, որպէս ի նկարագրէն տեսանէք։ Ընդ պողոտայն որ առաջի մերոյ տեղւոյն, անցանէ ստէպ պապն հանդիսիւ. սոյնպէս և այլ մեծամեծք։ Շուրջանակի գնովաւ են բնակարանք մեծամեծաց, և վանորայք կրօնաւորաց և կուսանաց. սակայն մեզ ոչ տան նեղութիւն, և ոչ մեք նոցա, վասն զարմանալի կերպիւ որոշելոյ ի միմեանց, և առ միմեանս չկարելոյ նայիլ. ուստի մեր տեղին ամենևին է զերծ ի հայեցուածոց աշխարհականաց և մանաւանդ կանանց։ Շինուածն է հին և վաղնջական. ուստի որմունքն որք ի վերայ ճանապարհին, են իբր կիսաւերք. սակայն ոչ տան ինչս. իսկ ի միջին կողմանէ բոլոր շինուածն է հաստատուն և բարի, վասն լինելոյ նորոգեալ և յօրինեալ ի յապաթէ ֆառսեթթիէն։ Տունն է երկու դաթ. վերին դաթն է զարդարեալ պիտանի և գեղեցիկ կարասեօք. իսկ ներքին դաթն ինչ ոչ ունի, որ վասն այժմուս լինի մեզ բնակարան բաւական չորից և հնգից, ունելով զտեղի մատուտի, սեղանատան, խոհանոցի, և այլ ամենայն պիտանաւոր տեղւոց. իսկ ի ներքոյ ներքին դաթին ունի զբազում մաղազայս և գետնատունն, ըստ սովորութեան Հռոմայ։ Ունի տեղին ի շինուածին և ի պարտիզին զութն և